թեան մասին, մենք վաղաժամ ենք համարում որևէ դրական պնդում։ Մի բան պարզ է, որ քանի Փաւստոսի վերջնական խմբագրութեան խնդիրն առկախ է մնում, սոյն հատուածս կարող է հանդիսանալ երկսայրի սուր նոյն խնդրի համար։ Զ. դ. կէսը և մասնաւորապէս 555 թ. մի որոշ սահման է, որից կամ յառաջ կամ յետոյ է կատարուած Փաւստոսի պատմութեան խմբագրութիւնը, այն ձևով ինչպէս որ մեզ է հասած։ Հատուածն ինքն իրեն վերցրած ունի թեր և ընդդէմ նշաններ։ Խնդրի լուծման համար անհրաժեշտ են այլ օժանդակ հիմքեր։ Փաւստոսի նոր քննադատներից մէկը, պ. Գ. տէր Պողոսեան, քանի մի ուշագրաւ դիտողութիւններով [1]) կապ է որոնում Փաւստոսի և Է. դ. Անանուն աշխարհագրութեան մէջ, մի հանգամանք, որ տանում է Բիւզանդական պատմութիւնը դէպի Է. դար։ Քննադատիս վարկածներն՝ իրենք իրենց դեռ ևս համոզիչ և կտրական փաստեր չեն խնդրի համար, բայց անպայման հարկաւոր նիւթեր են։

Լոնդոն 10 ապրիլի. Ն. ԱԴՈՆՑ

ՏԷՐ ԳԱԲՐԻԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Մշակ» լրագրի ներկայ տարուայ 66-րդ համարում արդէն համառօտ տեղեկութիւն տուել եմ ես Տ. Գաբրիէլ Պատկանեանից յետոյ մնացած ձեռագիրների որպէս և նոցա իմ տրամադրութեանս յանձնուելու մասին։ Այժմ «Արարատի» էջերում պարտք եմ համարում այդ ձեռագիրների մանրամասն ցուցակը հրատարակել։

---

1 Նկատողութիւններ Փաւստ. Բ. մասին. Վիեննա։

Ա. Անցիպ. 1. Բանաստեղծական, գրականական, պատմական, իրաւաբանական և այլ բովանդակութեամբ.

1. «Հայկ-երգ»*), բնստղծ. պատմ.», (ոտան.) 1710 տող աշխարհք.
2. «Արամ-երգ», » » » 2400 » »
3. «Շաւարշ Ա. և Վարդենի», » » 320 » »
4. «Առնակ», » » 494 » »
5. «Կաբ», » » 483 » »
6. «Սօսիք Արագածոտան», » (արձակ վէպ) 185 թղ. 4⁰ գրքր.
7. «Վաշտակ»*) » » 202 թղ. 4⁰ »
8. «Վարդան» (տ դրուագ), » (ոտան.) մօտ 1000 տող աշխ.
9. «Զայն ի Տրովադայ», » » 13 թղ. 4⁰ գրքր.
10. «Փառնջ Հայոց պատմութեան Հայկէն մինչև մեր օրերը»**), (1876) . . 8 թղ. 4⁰ »
11. «Հրաչեայ կամ արդեւլական աղօրեաց», (վէպ) 24 թղ. 4⁰ »
12. «Մահ Աբէլի» . . . 20 թղ. 2⁰ »
13. «Եսթեր» ողբերգ. (արձակ) 19 թղ. 2⁰ »
14. «Մահ Սաւուղայ» (սկիզբն) . . . 2 թղ. 2⁰ »
15. «Փառանձեմ», ողբերգ. 4 գործ. (արձակ) 63 թղ. 4⁰ աշխ.
16. «Արտաշէս Մանուկ, աբքայորդի Սանատրկոյ», հանդիսագրութիւն, դրուագ միակ . . . (ոտանաւոր) 22 թղ. 4⁰ »
17. «Սանատրուկ թագաւորի Հայոց մահը», անցք 4 ժամուց . (ոտանաւոր) 12 թղ. 4⁰ »
18. «Ոչ գիր և ոչ Կիրակոս—կամ Ուրբաթ, Շաբաթ, Կիրակի», պատմական բանաստեղծութիւն (թատերական). Տեսարան յերիս դրուագս, անցք 3 աւուրց (յամին 1041 թ. ի Կ. Պոլիս. (արձակ) 37 թղ. 4⁰ »
19. «Համլէթ», թարգմ. Ա. և Բ. տեսարանի Ա. գործողութեան . . . 11 թղ. 4⁰ »
20. «Դրացի», (արձակ պատմուածք Նոր-Նախիջևանի կեանքից) . . (արձակ) 23 թղ. 4⁰ »

---

*) Առաջին եօթն երկերի համար ինքը հեղինակը ունի կազմած այսպիսի մի ընդհանուր վերնագիր. „Հնաստեղծութիւնք կամ բանաստեղծութիւն պատմական համազգային դիւցազանց՝ Հայկայ, Արամայ, Արայի եւն., գրեալ ի 1854 թ. ի բանդին Ռուսոյ քաղաքի եւ ապա պարզագրեալ 1861 թ. ի Վենետիկ եւ ի 1864 ի Ս.-Պետերբուրգ եւ ի Տաւրիկ եւ ի Սպաւրապոլ“:

**) Այս վերնագիրը գրուած է Տ. Գաբրիէլի որդի՝ Ռափայէլ Պատկանեանի ձեռքով:

21. «Հոբս եղանակք», (բնական նկարագիր, 2 տետրակ) . . . . { 19 թղ. 40 աշխ. / 19 թղ. 80 »
22. «Նախընթաց հանգամանք արդի վիճակի մտաւորական զարգացման մեր» (գրուած 1874 թ. երկու օրինակ) . 31 թղ. 40 »
23. «Ի՞նչն է ազգիս պահպանողը», (արձակ դատողութիւն) . . . 10 թղ. 20 »
24. «Հարիւրամեակ Ն. Նախիջևան հայաբնակ քաղաքի» . . . (արձակ) 16 թղ. 40 »
25. «Հայոց ազգի նպատակը ի՞նչ է այժմ և այսուհետև ևս ի՞նչ պէտք է լինի, որ ազգը խոպառ չկորչի և ամեն Հայ իւր կարողութեան չափ երջանիկ կեանք վարէ» 6 թղ. 40 »
26. «Ներսէս Ե. կաթողիկոս և Հայրապետ ամենայն Հայոց», (նիւթը պատմութեան՝ գրուած 1873 թուից յետոյ). 65 թղ. 20 »
27. «Ուռումնասէր են Հայք»*) (դատողութիւն. 27 թղ. 40 »
28. «Վարդանանց պատերազմի վերայ մտածութիւն» . . . . . 19 թղ. 40 »
29. «Դատարակութիւն մանկանց», (դատողութիւն) . . . . . 12 թղ. 40 »
30. «Փայտէ ձիու վերայ նստած յառաջադիմութիւն» . . . . . 3 թղ. 20 »
31. «Միաբա՞ն են Հայք» (գրուած 1863 և ըստորագրուած «Հրահատ բդեշխ Ատրպատականի», (որ Տ. Գաբրիէլի կեղծ անունն էր) . . . . . 43 թղ. 40 »
32. «Ազգային յառաջադիմութիւն» . . 9 թղ. 40 »
33. «Ցարութիւն վարդապետ երբեմն Տէր Ցարութիւն աւագ քահ. Ալամդարեանց». 22 թղ. 20 »
34. «Ընդհանուր պատմութիւն», (հին, միջին, նոր և նորագոյն դարեր՝ ըստ երևութին թարգմանութիւն, 9 տետրակ 40 իւրաքանչիւրը մօտ 25 թղթից բաղկացած. 225 թղ. 40 »
35. «Թոքլ», պատմութիւն քաղաքակրթութեան Անգլիոյ, (թարգմանութիւն) . . 14 թղ. 40 »
36. Թարգմանութիւններ Ռուսական օրէնքների

*) 27-ից մինչև 34-ը յօդուածը գրուած են հաւանականօրէն Ռափայէլ Պատկանեանի խմբագրութեամբ 1863—64 թ. Պետերբուրգ հրատարակուած ,,Հիւսիս'' թերթի համար, ուր եւ մասամբ լոյս են տեսել մի քանիսը դոցանից:

Հաւաքածոյից (собраніе законовъ) — Զինուորագրութեան կանոնը, նոր-հաշտարար դատաստան (աշխարհաբար) որպէս և պաշտօնական վաւերաթղթեր Ռուսաց թագաւորների և կայսրների՝ Ալէքսէյ Միխայլովիչից սկսած և մինչև Նիկողայոս Ա.-ը հասցրած՝ Հայերի և ընդհանրապէս Արևելքի հետ Ռուսաստանի ունեցած յարաբերութիւնների մասին . . . . 285 թղ. 4⁰ գրբբ.

37. «Գործ վասն կարգառութեան իմոյ (գրում է իւր մասին Տ. Գաբրիէլը) 1860 թ. Ապրիլի 22 սկսեալ ի Ն. Նախիջևան և տնօրինեաց ի 1861 յունուարի 18» (պաշտօնական գրութիւնների պատճէններ):

---

2 Գրուածքներ կրօնական բովանդակութեամբ.

1. «Պատմութիւն եկեղեցւոյ Հնոյ և Նորոյ Ուխտի» (ընդարձակ աշխատութիւն՝ բազմաթիւ տեսարաններով). մօտ 250 թղ. 4⁰ աշխ.
2. «Դաւիթ և Սողոմոն» . . . 35 թղ. 4⁰ »
3. «Ընթերցարան պատմութիւն եկեղեցւոյ», մասն երրորդ, թագաւորք (ընտրութիւն Սաւուղայ) . . . 300 թղ. 4⁰ »
4. Ընթերցարան պատմութիւն եկեղեցւոյ», մասն Ե. Եօթանասնամեայ գերութիւն Հրէից և եկեղեցին Հրէից ի Բաբելոն. 120 թղ. 4⁰ »
5. «Հանդիսարան ուղղափառութեան Հայաստանեայց եկեղեցւոյ» (տպագրութեան պատրաստած՝ Ներսէս արքեպիսկոպոսի նամակով՝ 1879 թ. Կ. Պոլիս) . . 43 թղ. 4⁰ գրբբ.
6. «Հայաստանեայց եկեղեցւոյ կրօնագիտութիւն» (հարց ու պատասխանով) . 7 թղ. 4⁰ աշխ.
7. Ժամանակագրական համառօտաբանութիւն խորհրդոց տնօրինական աւուրց Տէրունականաց և յիշատակաց երևելի անցից . . . զորս տօնախմբութեամբ մեծարէ

... եկեղեցին Հայաստանեայց (2 օր.). 16 թղ. 4⁰ »

8. «Հայաստանեայց եկեղեցւոյ պատմութիւն», (թերթիկներ անկազմ) . . . 29 թղ. 4⁰ »

9. «Յիսուս և Պետրոս կամ Հայն փեսայի Տեառն Յիսուսի առ Հարսն իւր ս. եկեղեցի» (բանաստեղծութիւն չափաբերական՝ մօտ 1200 տող, իւրաքանչիւր տողի առաջ վկայութիւն գրած Հին կամ Նոր Կտակարանից. գրուած է 1877 թ.). 42 թղ. 4⁰ գրքր.

10. «Մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի աշխարհիս կենցաղավարութեան վերջին օրերը՝ չորս Աւետարանիչների ասացուածներով ձեւացրած. շարադրութիւն Իննովկենտիոսի Արքեպիսկոպոսի Քերսոնի և Տաւրիկոյ. 5 հատոր. ռուսաց լեզուէ թարգմանած» (միայն 9 փոքր փոստի թուղթ) 9 թղ. 4⁰ աշխ.

11. Այլ և այլք (մանր թերթերի վրայ գրած)—

—«Ծաղկաքաղ ի լիակատար սրբազան պատմութենէ եկեղեցւոյն Հայոց». 4 թղ. 4⁰ »

—«Ջատագովութիւն կրօնի» . . 7 թղ. 4⁰ գրքր.

—«Եկեղեցի և խորհուրդք նորա» . . 4 թղ. 4⁰ »

—«Հայերու մէջ քրիստոնէութեան սկզբնաւորութիւնը» . . . 12 թղ. 4⁰ աշխ.

12. Տոմարական գրուածք — Օրացոյցներ 1853, 63, 65 թուերի և այլ մանր գրուածքներ մօտ 10 կտոր. դոցա թիւմն է և մի ձեռագիր՝ օտար գրչութեամբ (ոչ Տ. Գաբրիէլի գործը), տոմարական բովանդակութեամբ և բազմաթիւ աղիւսակներով՝ գրուած 1815 թ. . . 35 թղ. 2⁰ գրքր.

Ցիշեալ աշխատութիւններից զատ՝ մնացել են բաւականաչափ թուով Տ. Գաբրիէլի նամակների սևագրութիւնները և նամակները այլ և այլ անձնաւորութիւններից։

Տ. Գաբրիէլի թղթերի մէջ պահուել են նաև մի քանի ձեռագիր երկեր օտար անձերի.

1. Քերոբէ Պատկանեանի „Ванскія надписи" հետազօ-

տութեան (որ լոյս տեսաւ «Լուս. Նախաբար. օրաթերթում») երկրորդ գլուխը։

2. Նոյն Ֆ. Պ.-ի մի ձեռագիր աշխատութիւնը «լրագիր հրատարակելու մասին» (որ լոյս տեսաւ «Հիւսիս» թերթի առաջին համարում՝ 1863 թ.)։

3. Միքայէլ Վայելչեանի (Ռափայէլ Պատկանեանի կեղծանունը) Մանեակ խմաստութեան՝ արևելեան բարոյաւէպք՝ դերմանականից թարգմանած (5 փոքր փոսոսի թղթի վերայ՝ աշխարհաբար)։

4. Պ. Վահագն Պատկանեանի՝ «Վարդանամահ» կամ Արկածք Վարդանայ Հայազգի պատանւոյ (45 թղթ. 4⁰ — աշխարհաբար)։

5. Հռամիզդ և Զենոբիա» (եղերերգութիւն. գրաբար ոտանաւոր) 14 թղթ. 4⁰։

6. Опытъ соглашенія разномыслій въ церквѣ Аристевой (1870 г.) 61 թղթ. 4⁰։

Բ. Տպագրուած երկեր*), որոնց բնագրերը պահպանուել են.

1. «Միջնավէպք»—ա. Անցք Հայոց ընդ Երասխ.
   բ. Ն. Նախիջևանի հիմնարկութիւնը և Տաւրիկեան Հայեր.

2. «Հայոց աղգի պատմութիւնը», հեղինակ. վերջը կիմանաք		
3. «Վարդան Մամիկոնեան».		
4. «Շաւարշ Բ.»	1863	Ս.
5. «Նիկոլ»	1864	Պետերբուրգ.
6. «Հայոց աղգի ուսումնասիրութիւն՝ ուսումնարանք և ուսուցիչք» . .	1865	
7. «Վիճակավաղք».		
8. «Երեք ցուպք Մասիսի» («Արարատում»).	1871	Ս. Էջմ.
9. «Հրաժեշտ Վարդանայ» »	1872	»
10. «Զարմայր»	(,,ի մամուլն'',—այսպէս է նշանակուած Տ. Գաբրիէլի ձեռքով մի թղթի վերայ այս գրուածքների մասին։	
11. «Վահագն»		

*) Տ. Գաբրիէլի հնագոյն տպագիր երկերն են (որոնցից նորա թղթերում ոչինչ հետք չէ պահպանուել) 1823 եւ 1825 թ. Աստրախան եւ 1851 թ. Թիֆլիս լոյս տեսած՝ Վարդապետութիւն Ուղղափառութեան, Պատմութիւն Աղէքսանդրի Մակեդոնացւոյ եւ Կրօնագիտութիւն համառօտ։ Այս, որպէս եւ սորեւ առաջ բերած 21 երկերի խորագրերը, արտագրում ենք Տ. Գաբրիէլի ձեռքով 1876 թուին նշանակած իւր երկերի մի ցանկից։

12. «Մրմունջք Յիսուսի» . . . 1875 Ռոստով
13. «Անուշաւան», (ազգային վիպասանութիւն. 1875 Զմիւռ.
14. «Մահ Պարետի», » » 1875 »
15. «Հռիփսիմէ կամ Փրկութիւն Հայաստանի», (ողբերգ.) . . . . . . 1875 Ռոստով
16. «Սանդուխտ» («ա»), ողբերգ. . . . 1876 Կ. Պոլիս
17. «Երգագիր պատմութիւն Հայոց . . 1876 Ռոստով
18. «Պարոյր» . . . . . . 1876 Զմիւռն
19. «Սանդուխտ («բ») ընդ մամլով» . . . 1876 Կ. Պոլիս
20. «Սանդուխտ» («գ») . . . . 1876 Ռոստով
21. «Իրաւախոհութիւն քարաձգութեանց Հ. Քեբոմէլի» (տանաւոր) . . . . . 1870 — 71 Զմիւռնիա (Արշ. Արար.)
22. «Զաւան և Փառնակ Ա.» ազգ. վիպասան. . 1877 »

Տէր Գաբրիէլի երկերի ցանկից յետոյ՝ աւելորդ-չհամարեցի տեղաւորել այստեղ նոյն հեղինակից թողած «ի Դամբարան ծերունւոյն Գաբրիէլի Պատկանեան» ոտանաւորը.

Եհաս աշուն։ Նոր զօրութիւն
Ոչ ևս շարժէ զբնութիւն,
Պարտէզք, այգիք ամայանան,
Մարգք թախծալիր անշքանան.
Լռեն և ձայնք հաւուց, թռչնոց,
Կառչին ձիւնհալք լերանց, բլրոց,
Թառշամին վարդք, ծաղկունք,
դալարք,
Ի սաղարթից մերկանան ծառք,
Եւ ջերմութիւն արեգական
Արգելանի յիւրում ական,
Կախեալ կան յօդս պարզք,
եղեմունք,
Սարսուռ ափռեն հովք և հող-
մունք.
Կայծ խորհրդոց արծարծեսցի՞
Ի սիրտ ուրախ հայրենակցի,
Եւ առիցէ՞ իւր ընկերին՝

Ընդ որում ցարդ տարուբերին.
Մինչդեռ բացք են երեսք
դաշտաց,
Այց արասցուք դամբարանաց,
Զի մարթասցուք գէթ ան-
գամ մի
Զօնել զանձնարկ ծանօթ շիրմի...
Է՞ր զարմանաս. ո՞չ ապաքէն
Աստ յեղբարց մեր բազումք
ննջեն,
Բազումք՝ որոց պտուղք երկանց
Բերան նուէր մեր ժամազանց։
Սակայն յաղգէս փոյթ մո-
ռացան
Եւ յիշատակք իսկ ջնջեցան,
Իբրու թէ չէր պէտք հայրենեաց
Եռանդուն սէր իւր զաւակաց։
Որպէս շիրիմս այս ծերունւոյ,

Որ զոհ եղաւ ազգին սիրոյ,
Զի զամէն ճիգն հոգւոյ, մըտաց
Զօնէր նըւէր իւր համազգեաց։
Եւ զի՞նչ տրիտուր էառ յազգէն,
Ցորոյ ձեռին էր ընտիր զէն.
Միշտ վիշտ յիւրոց և յօտարաց,
Ի սուտ եղբարց և յընկերաց։
Թախծագին էր ժամ անջատման
Ցորում եղաւ նա յայս տապան,
Տապան արժան դառն ար-
տասուաց
Թէ՛ ներկայից, թէ՛ ապառնեաց։
Այլ զի՞նչ է այս զոր տեսանեմ,
Սին բաղեղունք պատեն զայս
վէմ,
Եւ ընդ փոյթ ձեռն ձմերանի,
Լինի ծածկոյթ դամբարանի.
Եւ մինչ գարուն առցէ ժաման,
Լօռք և մամուռք լիցին պատան,
Եւ այլ ո՛չ ոք ի միտ բերցէ,
Թէ ազգասէր ոք աստ կայցէ։

«Ահա ինձ նոր նիւթ խորհրդեան
«Աստ կայ գալ մեզ ոչ անագան,
«Բայց ո՞յք ի մէնջ արդեօք գտցին,
«Որոց անուանք ոչ մոռասցին»։

Ի վերջոյ՝ պարտականութիւն եմ համարում յայտնել, որ Տ. Գաբրիէլի վերոյիշեալ բոլոր ձեռագիր երկերը՝ բացի Ներսէս Ե. կաթողիկոսի պատմութիւնից և իւր՝ Տ. Գաբրիէլի նամակագրութիւնից,—ուղարկելու եմ Ազգիս Վեհափառ Հայրապետին՝ *Մայր Աթոռի Մատենադարանում պահելու նոցա և ըստ Իւր հայեցողութեան հրատարակելու։*

Պրոֆ. Գր. Խալաթեան

8 *Ապրիլի* 1902 *թ.*
Մոսկուա
Լազարեան ճեմարան.